

## ЦАРСКИЕ ВОПРОСЫ ВИНОГРАДАРСТВА И ВИНОДЕЛИЯ

Աշխատություններ

II, 1956

Труды

Ս. Հ. ՊՈՂՈՍՅԱՆ, Ա. Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ-ի ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԽԵՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎԱՇ ԽԱՂՋԻ  
ՆՈՐ ՍՈՐՏԵՐԸ ԵՎ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՍԵՐՄԱՆԱԲՈՒՅՆԵՐԸ

Հայաստանը իրավացիութեան համարգում է խաղողի կուլտուրայի հնագույն օջախներից մեկը և հարուստ է տեղական արքեբազուր սորտերով, որոնց գոյցությունը մշակության մեջ հազարամյակ տարիներով է հաշվվում:

Ինչպես Հայաստանում, այնպէս էլ խաղողի վազի մշակման այլ օջախներում, գեռնս մինչ պատմական ժամանակաշրջանը, խաղողի տեղական լավագույն սորտերի ստեղծման դորձում վճռական դեր է խաղացել ժողովրդական պրիմիտիվ սելեկցիան։ Հետագայում մարդու կողմից լավագույն կլոնների հետևողական և սիստեմատիկ ընտրությունը, հարեան պետություններից և ցեղերից նոր կլոնների փոխառումը, գոյություն ունեցող սորտերի և կլոնների սերմերից ինքնացանի կամ բնական հիբրիդի պացիայի միջոցով նոր ձեռքի առաջացումը, բողբոջների տարափոխությունը և այլն, հանգեցրել են Հայաստանում ներկայումս գոյություն ունեցող խաղողի տեղական սորտերի բազմազանությանը, որոնք օժտված են շատ բարձր բարեկարգ հատկանիշներով և ավագալ վայրի համար բնորոշ բիոլոգիական առանձնահատկություններով։

Հայկական ԱՍԽ-ի Ամպելոգրաֆիայի մեջ (1947 թ.) նկարագրված խաղողի տեղական սորտները լիովին չեն ընդգրկում այն բազմազանությունը, որ իրականում գոյություն ունի մեր ռենսուրիկայի խաղողագործական շրջանների հին անկարգնեցում. Դեռևս սկս և մասամբ սպիտակապուղ շատ արժեքավոր կլոններ մնում են չուսումնասիրված և չնկարագրված:

Հայստանի խաղողի տեղական ամբողջ ասորական տը ոչ  
միայն լրիվ չի ուսումնասիրիվէ, այլև բնական այդ հարստու-  
թյունը չի օգտագործվել սելեկցիոն նպատակներով:



Մեր երկրի ժողովրդական տնտեսության աճող նոր պահանջները անհետաձգելի խնդիրներ են առաջադրում այդ արժեքավոր կուլտուրայի սելեկցիայի առաջ, ավելի բերքատու, բարձրութակ՝ տարրեր ժամկետներում հասունացող և տարրեր նշանակությունունեցող սորտեր սեղծելու համար:

Առաջադրված այդ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է բարեգակողմանի սորտերեն օգտագործել խաղողի տեղական սորտերի բնական սեռուրուների հակայական հարատությունը:

Ընդհանրապես սելեկցիոն աշխատանքներում ելանյութի ընտրության ժամանակի, առանձնակի առավելություն է արվում տեղական սորտերին, որոնք իրենց շատ առանձնահատկություններով հանդիսանում են տեղական պայմաններին պատմականորեն հարմարված և ընտելացած սորտեր:

Բազմամյա բույսերի մոտ, բացի գրանից, կարեար է ելանյութի յուրարմատ լինելը, որին ի. Վ. Միչուրինը և Տ. Պ. Լիսենկոն հատուկ նշանակություն էին տալիս, որպես անհրաժեշտ պայման կուլտուրական հատկություններով օժտված սերմնարույներ ստանալու համար (<sup>1, 2</sup>):

Այդ տեսակետից Հայաստանի խաղողի տեղական հինավուրց սորտերը որպես ելանյութ սելեկցիայի համար, մեր պայմաններում, առանձնակի նշանակություն են ստանում, քանի որ նրանք տեղական պայմաններին հարմարված, ընտելացված և տնտեսապես բարձր արժեքավոր հատկություններով օժտված լինելու հետ զուգընթաց, հաղարավոր տարիների ընթացքում բազմացվել են կարոններով — յուրարմատ: Մակայն, այդ սորտերի սերմնային սերունդների բնույթը, որը հիմքն է հանդիսանում նրանց՝ որպես ելանյութ օգտագործելու համար, չեր ուսումնական պայման վերջերս է սկսված:

Խաղողի սելեկցիայի բնագավառում աշխատանքը մենք սկսեցինք խաղողի տեղական սորտերի սերմնային սերնդի ընույթի ուսումնասիրությունից, նպատակ ունենալով հետազա խաստանքների համար պարզելու հետեւյալ կարևոր հարցերը:

1. Խաղողի սերմնարույսերի փոփոխականության բնույթը սորտի և հիբրիդային կոմբինացիաների սերնդում:

<sup>1</sup> Ի. Վ. Միչուրին, Երկերի ժողովածու, հատոր 1, էջ 190, 1948 թ.

<sup>2</sup> Տ. Պ. Լիսենկոյի Յարովիզացիա, ամսագիր № 3, էջ 38, 1938 թ. (ռուսերեն):

2. Տնտեսապես արժեքավոր հատկությունների ձևավորումը և կայունացումը սերմարույսերի մոտ՝ նրանց անհատական դարձացման պրոցեսում:

3. Խաղողի սերմարույսերի կենսունակությունը անհատական զարգացման ընթացքում և վեղետատիվ սերնդում, որը շատ կարեղոր է երկարատև վեգետատիվ բազմացման հետեւանքով ծերպացած հին սոքակը սերմարոյին բազմացման միջոցով թարմացնելու համար:

4. Խաղողի սերմարոյին բույսերի հակվածությունը մենառի աղգեցության տակ զաստիարակվելու:

5. Սերմարույսերի մոտ վաղահասության և ցրտադիմաց-իունության հատկությունների ձևավորման և զարգացման պայ-րանները:

Այդ հարցերի ուսումնասիրությունը տարվել է այն ուղղությամբ և այնպիսի ելանյութի վրա, որպեսզի նշված տեսական հարցերի մշակման պրոցեսում, հնարավոր լինի լուծել անդանի և արգյունարերական խաղողի նոր սոքակը ստեղծելու դորձնական խնդիրները:

Այդ նպատակով մեր կողմից 1939—1955 թթ. ընթացքում ստեղծված է սելեկցիոն մեծ ելանյութի քանակով 14 000 սերմարույսից ավելին, որոնք աճեցվում են ինստիտուտի էքսպերիմենտալ բազայում և սեսպուրլիկայի նախալեռնային ու լեռնային շրջանների տարրեր կետերում: Այդ սերմարույսերը աճեցված են տեղական և մի քանի բերովի սորտերի սերմերից, տեղական սորտերի տրամախաչումից, տեղական ու բերովի սորտերի, տեղական և ցրտադիմացկուն սորտերի տրամախաչումից ստացված սերմերի ցանքից:

Նշված ելանյութի ուսումնասիրությունը ցույց ավեց, որ յուրաքանչյուր խաղողի ինչպես տեղական, նույնական և բնիրովի սորտերը սերմարոյին բազմացման ժամանակի սերնդում մեծ փոփոխականություն են զարգացնում, որը արտահայտվում է մորֆոլոգիական հատկանիշների, ծաղկի կառուցվածքի, պտղի ձևի, դույնի, շաքարի և թթվածքի առարունակության, վեգետացիոն ժամանակաշրջանի տևողության և այլ հատկանիշների բազմականությամբ: Նույնականացնություն են զարգացնում նաև հիբրիդային սերմարույսերը կոմբինացիաների սերնդի սահմաններում:

Խաղողի երկնոն սորտերը սերմերով բազմացնելու ժամա-

նակ, սերնդում հատկանիշների բազմազանության բնույթով նմանվում են հիբրիդներին: Ի տարբերություն ինքնափոշուազոց միաժյա քույսերի, նրանց մոտ սերմնային սերնդում բազմազանությունը զարգանում է հենց առաջին սերնդից: Խաղողի սերմնաբույսերի մոտ փոփոխականության աստիճանը, ելնելով նրանց ծագումից, տատանվում է սկսած ելակետային ձևերի վերաբռնապահությաց մինչև ծայրագույն շեղումները: Խաղողի հինավուրց սորտերի սերմնաբույսերը հիմնականում վերաբռնապահում են իրենց ծնողական ձևը, ինչպես օրինակ՝ Ռոկեհատը, Ճիւարը, Մսխալին, որոնք մեր պայմաններում մշակվում են ավելի քան 3000 տարի: Յուրամասխաղողի հինավուրց սորտերի և նրանց հիբրիդների սերմնաբույսերը, ի տարբերություն պտղատու կուլտուրաների սերմնաբույսերի, մեծ բազմազանության հետ զուգընթաց, զարգացնում են կուլտուրական խաղողի հատկությունները և հատկանիշները:

Խաղողի սերմնաբույսերը համեմատած իրենց ծնողական ձևերի հետ, հիմնականում տվելի բարձր կենսունակություն ունեն, որը պահպանվում է նաև նրանց վեգետատիվ սերնդում:

Տարբեր ծնողական զույգերի խաչաձևումից կամ պատվաստումից ստացված սերմնաբույսերը ավելի կենսունակ են, քան նրանք սորտերի սերմնաբույսերը:

Աձեցման հավասար պայմաններում սերմնաբույսերի վեգետատիվ սերունդը իր կենսունակությամբ հաճախ գերազանցում է ծնողական ձևերի վեգետատիվ սերնդին: Առանձնապես դա պարզորոշ է հինավուրց սորտերի սերմնաբույսերի մոտ (ինչպիսին են Ռոկեհատը, Արարատին, Մսխալին, Ճիւարը), որը արտահայտվում է նրանց կտրուների ավելի լավ արմատակալելու, ավելի հզոր և բերքատու լինելու հատկություններով, համեմատած ծնողական սորտերի վեգետատիվ սերնդի հետ:

Սերմնաբույսերի վեգետատիվ սերնդի բարձր կենսունակությունը, հատկապես այն սերմնաբույսերի, որոնք վերաբռնապահում են ծնողական սորտի տեպը, կարևոր նշանակություն ունի խաղողի տեղական հին արժեքավոր սորտերը սերմնային ճանապարհով թարմացնելու գործում, որոնք ծերացել են երկարատև վեգետատիվ բազմացման հետևանքով:

Խաղողի յուրաբարձար սորտերի և հիբրիդների սերմնաբույսերի բազմազանությունը, կուլտուրական հատկությունների և հատկանիշների զարգացմամբ՝ զուգացված բարձր կենսունա-

կության հետ, լայն հնարավորություններ են ստեղծում նրանցից նոր արժեքավոր կլոններ ընարելու։ Սակայն հարց է ծագում, հանդիսանում են արդյոք դրանք վերջնականապես ձևավորված, պատրաստի ձևեր ընարության և նրանցից նոր սորտեր ստեղծելու համար։

Սելեկցիայի պրակտիկան ցույց է տալիս, որ խաղողի, ինչպես նաև մյուս բույսերի բազմաթիվ նման սերմնաբույսերից միայն քչերին է հաջողվառմ սորտ դառնալու, շնորհիվ նրանց անհատական զարգացման պրոցեսում ունեցած փոփոխական բնույթի և առանձին թերությունների, որով կարող են օժտված լինել համարյա նրանք բոլորը։

Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խաղողի սերմնաբույսերի անհատական զարգացման պրոցեսում, փոփոխման կարող են ենթարկվել նրանց բոլոր հատկությունները և հատկանիշները, եթե դրան նպաստում են կյանքի պայմանները, բնդ սրում, սերմնաբույսերի մեծամասնության մոտ անհատական զարգացման ընթացքում, փոփոխությունները կատարվում են աստիճանաբար և որոշակի ուղղությամբ, իսկ մի քանիսների մոտ նույնանման պայմաններում, նոր հատկությունները ծագում են կարծես թե հանկարծակի։

Սելեկցիոն աշխատանքների համար, ամենից կարելոր հանդիսանում է սերմնաբույսերի անտեսական հատկանիշների կայունացման բնույթի պարզաբանումը՝ նրանց անհատական զարգացման ընթացքում։

Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ խաղողի սերմնաբույսերը պատարերման առաջին արդում քերքատվությամբ, ողկույզների և պտուղների մեծությամբ ու համեմատականիքների մասնիքներով զգալի չափով զիջում են պատղարերման հաջորդ տարիներին, այսինքն՝ ժառանգականության կայունացման հետ զուգընթաց լավանում են նրանց տնտեսապես արժեքավոր հատկանիշները։

Այդ բացարձում է նրանով, որ խաղողի, ինչպես նաև պտղատունների մոտ, սերմնաբույսերի անհատական զարգացումը սկսվում է կարծես թե վայրի ծնողների հատկությունների կըրկնությամբ, և նրանց մեծանալուն զուգընթաց ուժեղանում են տվելի ուշ առաջացած կուլտուրական ծնողների հատկանիշները և հատկությունները, որի հետևանքով տեղի է ունենում տնտե-

սապես արժեքավոր հատկանիշների լավացումը, նրանց ժառանգականության կայունացման ընթացքում:

Խաղողի սերմնարույսերի մոտ տնտեսագես արժեքավոր հատկությունների բարելավումը նրանց անհատական զարդացման պլրոցեսում, ինչպես նաև նրանց վեգետատիվ սերնդում, սերտորին կապված է լավ խնամքի հետ, առանձնապես պտղաբերման առաջին տարիներին, մանավանդ որ այդ պայմանները նրանց ժնողական ձևերի համար հանդիսանում են պատմական պահանջ:

Այստեղ ինարկե պիտք է հաշվի առնել, որ օրգանիզմներն իրենց զարգացման ոչ բոլոր շրջաններում է, որ միատեսակ վերաբերմունք են ցուցաբերում զեպի կյանքի լավ պայմանները և ոչ բոլոր պայմանները կարող են միատեսակ ազգել և փոխել նրանց զարգացման ընթացքը ցանկալի ուղղությամբ:

Խաղողի սերմնարույսերի փոփոխականությունը, իրենց անհատական զարգացման ընթացքում, հնարավորություն է տալիս դեկավարելու նրանց ժառանգականությունը, գաստիարակման տարրեր մեթոդներ կիրառելու միջոցով:

Մեր փորձերում սերմնարույսերի մեջ ցանկալի հատկությունները նպաստակագիր կերպով զարգացնելու համար, մենք կիրառել ենք երիտասարդ, գենես չպատղաբերող սերմնարույսերի պատվաստման մեթոդը, հին ժառանգականորեն կայունացած սորտերից վերցրած պատվաստակալների վրա:

Խաղողի սերմնարույսերի մոտ վազանասության հատկությունը զարգացնելու նպատակով, մի քանի սորտերի և նրանց հիբրիդների սերմնարույսերը իրենց կյանքի հենց տառաջին տարուց, գաստիարակում ենք այնպիսի պայմաններում, որոնք նպաստում են վաղահասության զարգացմանը՝ նման գաստիարակության համար բարենպաստ գանվեցին Արարատյան դաշտավայրի «զոերի» հողակիցների համար պայմանները, որտեղ խաղողի հին, կայունացած սորտերի հասունացումը համեմատարար շուրջ է սկսվում, քան թե ոեսպուրիկայի մնացած ցածրադիր շրջաններում:

Նույնանման գաստիարակության մեթոդ մեր կողմից կիրառվում է նաև սերմնարույսերի մեջ ցրտագիմացկունությունը զարգացնելու նպատակով:

1949 թ. սկսած տեղական և միջուրինյան սորտերի սերմնարույսերը, այդ սորտերի և ցրտագիմացկուն այլ ձևերի արագմախաչումից սուցված հիբրիդային սերմնարույսերը, ինչպես

Դաեւ միայն հարավային ծագում ունեցող հիբրիզային սերմնապուլութիւնը, մեր կողմից անեցվում են ուսապուլիֆկայի տարրեր բարձրության գոնաներում, կիմայի տարրեր խստության պայմաններում։ Այդ վայրերը, որտեղ աճեցվում են նշված սերմնաբույները, գանվում են ծովի մակերևույթից տարրեր բարձրության վրա, սկսած 1200 մետրից (խաղաղագործական հին շրջանների սահմանակից դռուի)՝ մինչև 1560 մ և ավելի բարձր, որտեղ խաղող տռասարակ չի մշակվել։

Յուրաքանչյուր խաղողի սերմնաբույների բնույթի ուսումնապրությունը, որի նպատակն էր պարզել երիտասարդ սերմնաբույների զարգացումը դեկավեկուու ուղիները, նրանցից նոր սորտեր սակագնելու համար, հանգեցրել է արգեն որոշակի դործական արդյունքների։

Ներկայումս մեր կողմից ստացված են սնգանի ու զինուխաղողի 7 նոր սորտեր և մի շարք արժեքավոր հեռանկարային սերմնաբույներ։

Ստորև բերվում է մեր կողմից ստացված նոր սորտերի ու մի քանի արժեքավոր սերմնաբույների նկարագրությունը։

Նկարագրված բոլոր սորտերը և հեռանկարային սերմնաբույները դաստիարակվել եւ ուսումնասիրվել են Հայկական ՍՍԾ Այգեղործության և գիննեգործության ինսահիտութիւն էքսպերիմենտալ բազայում, որը գտնվում է Երևանի շրջակայրում։ Փարագար գյուղից ոչ հեռու, Արարատյան հարթավայրի կիսանտպատային գոտու պայմաններում, «ղաներ» կաշվող քարքարոտ հողերում։ Խաղողի այդիները նշված վայրում տնկված են 2,5×1,5 մ սնման մակերեսով և մշակվում են հագնարային ձևավորմամբ շալակերների վրա, վազի 7—9 աշքի վրա էտի կատարմամբ։

Պատք է նշել, որ սորտերի և սերմնաբույների ագրոբիոլոգիական բնութագրման ժամանակ աշնան տերեաթափը ցույց չի տրվում, որովհետեւ Արարատյան դաշտավայրի պայմաններում խաղողի այգիները աշնանը թաղվում են մինչև բնակոն տերեաթափ սկսվելը։

Արմենիա։ Անդանի խաղողի միջանաս սորտ է։ Ստացված է իծապառեկ և Աւ Սաթենի սորտերի տրամախաչումից և սերմնաբույնի երիտասարդ հասակից Դեղին Երևանի սորտի մեջառի ազգեցության տակ դաստիարակելու միջոցով։

Բառարանական ակարագրությունը Տերեները խո-

շոր են ( $21,6 \times 17,2$  սմ): Թիթեղը ուժեղ կտրաված, հնգարլթակ, հարք մակերեսով՝ վերին կտրավածքները միջակ խորության են, բաց, զուգահեռ կողերով, երբեմն փակ, հերձանցքանման լուսանցքով: Ներքին կտրավածքները մանր են և բաց: Կոթունային կտրավածքը բնական վիճակում բաց է, կամարաձև, երբեմն քնարաձև: Կողային ատամները սղոցաձև, եռանկյունի սուր գագաթով: Մյուս ատամները եռանկյունաձև: Տերիի ներքին մակերեսը դիմավոր դղերի տարածման տեղում ծածկված է մազմղուկներով:

Ծաղիկը երկսեռ է:

Ողկույզները խռովոր, կոնաձև, միջակ խտությամբ: Պառուզր խռովոր ( $25,0 \times 16,0$  մմ, ամենամեծը  $28,5 \times 17,6$  մմ), երկարավունաձվածե, մուգ-կապույտ գույնի, պատած ուժեղ մոմաշերտով: Պտղամիսը՝ մսա-հյութալի, մաշկը համեմատարար նուրբ համբ շատ գուրալի: Մերմերի քանակը պառուզի մեջ՝ 2—4 հատ:

Ագրորի ոլոգիական հատկությունները: Հայաստանի հարավային մասում հասունանում է օգսատոսի վերջին: Վեգետացիոն շրջանի տեսղությունը (Երևան), բողոքման սկզբից մինչև պտղի լրիվ հասունացումը, 135—137 օր է: Աճեցող դությունը ուժեղ է: Բերքատվությունը բարձր է, զահը պայմաններում չեկտարից տալիս է 220—230 ցենտներ բերք:

Տնտեսաւոր է խնուլոգիական հատկությունները: Ողկույզի մեխանիկական կազմը (տոկոսներով ընդհանուր քաշից): Հյութը և պտղամիսի ամուր մասերը — 93,0, չանչը — 2,1, մաշկը — 2,8, սերմերը — 2,1: 100 պտղուղի միջին քաշը — 449 գ, 100 սերմի քաշը — 3,9 գ, ողկույզի միջին քաշը — 436 գ, պառուղների քանակը ողկույզներում՝ 95 հատ:

Մեխակական հատկությունները: Փոխադրունակ սորտ է: Պտուղը ճգմելու համար պահանջվում է միջին հաշվով 1214 գ: Պտղակոթունային ամրությունը մեծ է, նրա դիմացկունությունը հավասար է 448 գրամի:

Քիմիական հաղմաքայլ լրիվ հասունացման շրջանում պտղի շաքարայնությունը —  $22,0\%$ , թթվությունը —  $4,0\%$ , համտեսի դնահատականը — 9,6 բալ:

Սորտը աչքի է ընկնում բացառիկ գեղեցիկ արտաքին տեսքով և իր համով: Պիտանի է նաև բարձր որակի չամփիչ պատրաստելու համար: Նախատեսվում է սորտը գարգացնել ունակությամբ խաղողագործության հին շրջաններում և նոր յուրացվող ջրովի ղըռ հողերում:



Նկ. 1. Արմենիա սորտի սղկույզը

Հբազդանի: Սեղանի խազողի ուշահաս սորտ է, Ստացված է կարմիք կախանի սորտի սերմերի ցանքից: Ողկույզի և պողի ձեռլ նման է Ռոկենատին, գունավորությամբ՝ կարմիք կախանուն, ըստ երկույթին առաջացել է այդ սորտերի բնական փռ-չուռումից:

Բռուսարանական նկարագրությունը: Տերենսիրը խոշոր են ( $20,5 \times 17,0$  մմ), կլորավուն: Թիթեղը կարտված, հնգարբը՝ թակ, հարթ մակերեսով: Վերին կտրվածքները խոր են, հիմնականում փակ, ձվաձև լուսանցքով և սուր հատակով: Ներքին կտրվածքները խոր են, մեծ մասամբ բաց, քնարաձև: Կոթունային կտրվածքը՝ բնական գրությամբ բաց, քնարաձև, սուր հատակով: Կողային ատամները սղոցաձև, եռանկյունաձև, մյուս ատամները — եռանկյունաձև, սուր գագաթով: Տերեի ներքին մակերեսը ժամկետած է կարճ մազմզուկներով:

Ծաղիկը երկսեռ է:

Ողկույզները խոշոր, գլանաձև, միակողմանի թեավոր, խիտ:

Պտուղը խոշոր ( $31,5 \times 20,8$  մմ), կլոր, շատ խիտ ողկույզների մոտ կողքերից և հիմքում քիչ ներա ընկած, մուգ-կապույտ գույնի, պատաժ ուժեղ մոմաշերտով: Մաշկը բարակ, պտղամիսը՝ մուհանութեալի, համբ լրիվ թարմացնող, սերմերը պտուղի մեջ՝ 1—4 հատ:

Աղբորսի իռլու ողկան հատկան հատկան թյունները: Հայաստանի հարավային մասում հասունանում է սեպտեմբերի երկրորդ կեսին: Վեգետացիայի տեղությունը (Երևան) բողբոջման սկզբից մինչև պտղի լրիվ հասունացումը տևում է 144—149 օր: Աճեցողությունը մեծ է: Մատի հասունացման աստիճանը բարձր է: Բերքատվությունը բարձր է. Արարատյան հարթավայրի կիսանապատային հողերում՝ դոկտում հեկտարից տալիս է 250—300 ցենտներ բերք:

Տնտեսա-տեխնիկական հատկան հատկան թյունները: Ողկույզի մեխանիկական կազմը (տոկոսներով ընդհանուր քաշեց): Հյութը և պաղամսի ամուր մասերը — 91,5, չանչը — 2,3, մաշկը — 3,1, սերմերը — 3, 1: 100 պատղի միջին քաշը — 352 գ, 100 սերմի քաշը — 4,5 գ, ողկույզի քաշը — 555 գ, պտուղների քանակը ողկույզում — 103 հատ:

Մեխանիկական հատկան հատկան թյունները: Պտղակոթունային ամբությունը հավասար է 290 գ, պտուղը ճշմելու համար պահանջվում է միջին հաշվով 934 գ ծանրություն, ուստի և



Նկ. 2. Հրաղդանի սուրճի ռդկույզը:

սորտը դասվում է համեմատաբար ցածր փոխազրունակ սորտերի շաբաթին:

Քիմիական կազմը լրիվ հասունացման շրջանում՝  
շաքարայնությունը՝  $22-23^{\circ}/_0$ , տիտրվող թթվությունը՝  $5,2-6,3^{\circ}/_0$ , համտեսի գնահատականը՝  $8,1$  բալլ:

Որպես բարձր բերքատու և բարձրորակ սորտ, չբազգանին  
առաջադրվում է արտադրական լայն բազմացման հայտատանի  
խաղողագործական հին շրջաններում և ուսպուրիկայի կիսա-  
անսապատային գոնայի սոռովող նոր յուրացվող զըռ հողերում:

Արագածի: Մեղանի ուշահաս սորտ է: Ստացված է Իծա-  
պտուիի և Վարդագույն Երևանի սորտերի տրամախաչումից և  
երիտասարդ սերմնաբույսը Արարատի սորտի մենասորի ազդեցու-  
թյան տակ դաստիարակելու միջոցով:

Բուսաբանական նկարագրությունը: Տերեները  
միջակ մեծության ( $15,5 \times 15,2$  սմ), կլորավուն: Թիթեղը միջակ  
կտրաված, հնգարիթակ, մակերեսը՝ ցանցանման կնճռոտած: Վերին  
կտրվածքները միջակ խորության, հիմնականում բաց, քնարաձև,  
համարյա գուգահեռ կողերով: Ներքին կտրվածքները մանր կամ  
միջակ բաց, քնարաձևել: Կոթունային կտրվածքը բնական վիճա-  
կում բաց, կամարաձև, կողային ատամները՝ եռանկյունի, կլո-  
րացած գագաթով: Բլթակների ծայրերի ատամները եռանկյու-  
նաձև: Ներքին մակերեսը ջղերի երկարությամբ ծածկված է  
մազմզուկներով:

Ծաղկի տիպը փունկցիանալ իգական է: Ողկույզները խո-  
շոր, կոնաձև, միջակ-խտությամբ: Պտուղը խոշոր ( $24,7 \times 17,3$   
մմ, ամենախոշորները՝  $29,5 \times 22$  մմ), հակառակ ձվաձև, բութ  
վերջավորությամբ, մուգ-վարդագույն: Առանձին պտուղների  
մուգ գագաթի վրայով անցնում է ակոս, նման Արարատի սոր-  
տին: Մոմաշերտը չափավոր, պտղամիսը՝ ամուր-մսալի, խրճիրը-  
նան: Համը գուրալի է: Պտղի մեջ՝  $1-2$  սերմ:

Ագրոսիությունի ական հատկությունները: Հայաս-  
տանի հարավային մասում հասունանում է սեպտեմբերի երկրորդ  
կեսին: Վեգետացիոն շրջանի տևողությունը (Երևան), բողոքման  
սկզբից մինչեւ պտղի լրիվ հասունացումը,  $145-148$  օր: Անեցողու-  
թյան ուժը մեծ է: Մատերը լավ էն փայտանում: Բերքատվու-  
թյունը բարձր է: թեև փունկցիանալ իգական ծաղիկներ ունի,  
սակայն, լրացուցիչ արհեստական փոշտման դեպքում, դոկերի



Նկ. 3. Արագածի սուբտի ռդեկույզը

քարքարոս հողերում, հեկտարից տակսու է 250—300 զենտներ բերք: Աճեցման միենույն պայմաններում բերքատվությամբ դպալի չափով գերազանցում է իր ծնողական սորտերին՝ իծաղտուկին, Վարդագույն Երևանուն և Արարատուն, որոնք սեղանի լավագույն սորտեր են հանդիսանում:

Տնակառաւուն խնութուգի ական և ատկությունները Ողկույզի մեխանիկական կազմը (տոկոսներով ընդհանուր քաշից): Հյութը և պտղամսի ամուր մասերը՝ 93,3, չանչը՝ 2,7, մաշկը՝ 2,4, սերմերը՝ 1,7 : 100 պտուղի միջին քաշը՝ 489 գ, 100 սերմի քաշը՝ 4,9 գ, ողկույզի քաշը՝ 605 գ, պտուղների քանակը՝ ողկույզում՝ 124 հատ:

Բարձր փոխադրունակ սորտ է. պատությունը ճպմելու համար պահանջվում է միջին հաշվով 1719 գ ծանրություն, պտղակաթունի ամրությունը հավասար է 449 գրամի:

Բիմի ական կազմը: Լրիսի հասունացման շրջանում պտուղների շաքարայնությունը՝ 22,8 %, թթվությունը՝ 4,0 %, չամտեսի գնահատականը՝ 8,5 բալլ:


Օգտագործվում է թարմ վիճակում և կախանի համար:

Ծնորնիվ պտուղների մասինիությանը և մաշկի ամրությանը, լավ հումնությունը է հանդիսանում կոնսերվի արդյունաբերության համար, հատկապես բարձր որակի մարինադ պատրաստելու համար:

Առաջադրվում է բազմացնելու սեսպուրլիկայի խաղողագործական հիմն շրջաններում և Արարատյան գաշտավայրի նոր յուրացվող՝ զբանագործում:

Վարդենի: Սեղանի ուշահաս սորտ է: Սատարած է իծաղը-տուկական Վարդագույն Երևանի սորտերի արամախաչումից և երիտասարդ սերմնաբույզը Վարդագույն Երևանի սորտի մենաբույզության վատակարակելու միջոցով:

Բուռար անական և կարագը ու թյունը: Տերեները միջակամեծության (17,5 × 17,7 սմ), կլորաձև: Թիթեղը թույլ կորաված, հարթ մակերեսով: Վերին կտրվածքները՝ փոքրից մինչեւ միջակ, բաց, քնարաձև: Ներքին կտրվածքները մանր են, բաց, վերինների նման: Կոթունային կտրվածքը խոր, բաց, կամարաձև, երբեմն փակ, նեղ էլիստաձև լուսանցքով: Կողային ատամները եռանկյունաձև, գոգավոր կողերով, սուր զագաթով, երբեմն գըմբիթաձև: Բլթակների ծայրի ատամները եռանկյունաձև: Տերենի հակառակ երեսը ջղերի երկարությամբ պատաժ է մազմզուկ-ներով:



Նկ. 4. Վարդահնի սոբակ ողկույզը:

Ծաղիկը երկսեռ է:

Ողկույզները խոշոր, կոճաձև, միջին խտության:

Պտուղը (24,9 × 15,3, մմհնամեծերը 30,0 × 17,5 մմ),  
օվալաձև, մուգ-վարդագույն, մոմաշերաբ չափավոր, պաղամիսը  
մսահյութալի, խրճիքան, մաշկը բարակ, բայց բավականին  
ամուր, համը լրիվ, շատ գուրբալի: Պտղում՝ 2—4 սերմ:

Ագրորիսլոգիական հասունանում է սեպտեմբերի երկրորդ  
կեսին վեգետացիոն շրջանի տեսղությունը (Երևան) բարողման  
սկզբից մինչև պտղի լրիվ հասունանալը՝ 146—153 օր: Աճեցողու-  
թյունը՝ միջակ, վազի հասունացումը՝ լավ: Բերքատվությունը  
միջակից բարձր: Դոերի պայմաններում հեկարից տալիս է  
210—220 ցենաներ բերք:

Տնաւեսաւուելու կական հատկությունները:  
Ողկույզի մեխանիկական կազմը (տուկուներով ընդհանուր քաշեց):  
Հյութը և պտղամասի ամուր մասերը — 92,9, չանչը — 198, մաշկը  
— 2,42, սերմերը — 2,7 : 100 պտուղի միջին քաշը — 313 գ, 100  
սերմի քաշը — 4,5 գ: Ողկույզի քաշը — 278 գ, պտուղների միջին  
քանակը ողկույզում — 87:


Մեխանիկական հատկությունները: Փոխադրունակ  
սորտ է, պտղով ճգմելու համար պահանջվում է միջինը 1574 գ  
ծանրություն, պտղականթունի ամրությունը որոշվում է միջին  
հաշվով 277 գ:

Քիմիական կազմը: Լրիվ հասունացման շրջանում  
պտղի շաքարայնությունը — 22,1%, թթվությունը — 3,0%: Համ-  
տեսի գնահատականը 9 բալլ:

Բացառիկ գեղեցիկ արտաքին տեսքով և պտղի բարձր որա-  
կով վարդենին դասվում է տեղական խաղողի լավագույն սե-  
ղանի սորտերի շարքին: Սորտի զարգացումը նախատեսվում է  
ուսուպուրիլայի խաղողաբուծական հին շրջաններում և Արարա-  
յան գաշտավայրի սոսովով նոր յուրացվող զբու հողերում:

Տոկոս: Սեղանի միջանաս սորտ է: Ստացված է Սովորակ  
Արաքսինի սորտի սերմերի ցանքեց:

Տուամբան ական ական նկարագրությունը: Տերևները  
միջակ մեծության են, կլորավուն: Թիթեղը թեթեակի կռացած դեպի  
ցած, թույլ կտրտված, հնգաբլթակ, երբեմն եռաբլթակ, մակերեսը  
հարթ: Վերին կտրվածքները խորն են, բաց, քնարաձև: Ներքին  
կտրվածքները միջակ, քնարաձև: Կոթունային կարվածքը փակ,



Եկ. 5. Տուլուսն առըստի ողկույզը:

Ներձանցքանման լուսանցքով: Եզրի ատամները պղոցաձև, եռոնկյունաձև, բլթակների ծայրերի ատամները եռանկյունի, ոռու գագաթով: Տերեւի ներքին մակերեսը պատված է խիտ մաղմրդուկներով:

Ծաղիկը երկօնու է: Ողկույզները միջին մեծության, գլանաձև, երբեմն գլանակրոնաձև:

Պատողները խոշոր ( $21,0 \times 16,2$  մմ, մեծերը  $23,0 \times 18,0$  մմ), սկալաձև, շատ խիտ ողկույզների մոտ կողքերից ներս ընկած, կանաչավուն-գեղին, կարմիր բծերով: Պատղամիսը ամուր է, մսալի: Մաշկը բարակ համբ՝ գուրբալի: Պաղի միջն 1—3 սերմ:

Ագրոքիուսուկի ական հատկությունները: Հայաստանի ցածրադիր շրջաններում հասունանում է օգոստոսի երկրորդ կեսին: Վեգետացիոն շրջանի անողությունը (Երևան) բոլորջման սկզբից մինչև պաղի լրիվ հասունանալը՝ 132—135 օր: Աճեցողությունը միջակ, մատի հասունացումը լավ: Բերքատվությունը կայուն է և բարձր: Հայաստանի հարավային գնայում զուերի պայմաններում հեկտարից տալիս է մինչև 295 ցենտներ բարձրակ բերք: Բնդունակ է առաս պտղաբերելու երկրորդական բոլորջներից:

Տնտեսա-տես և խոնություն ական հատկությունները: Ողկույզի մեխանիկական կազմը (տոկոսներով բնդհանուր քաշեցից), հյութը և պտղամսի ամուր մասերը—91,2, չանչը—3,6, մաշկը—3,15, սերմերը—2,05; 100 պտղի միջին քաշը—347 գ, 100 սերմի քաշը—3,3 գ, ողկույզի քաշը—429 գ, պտղակների միջին քանակը ողկույզում—129:

Մեխանիկական հատկությունները: Սորտը աչքի է ընկնում իր բարձր փոխազբունակությամբ: Պատողը ճգմերու համար պահանջվում է միջին հաշվով 2427 գ ծանրություն:

Պաղակոթունային ամրությունը որոշվում է միջինը 519 դրամ ծանրությամբ:

Քիմիական կազմը: Պտղի լրիվ հասունացման շրջանում շաքարայնությունը—25,5%, թթվառթյունը— $4,0^{\circ}/_{00}$ , Համտեսի գնահատականը—8 բալլ:

Շնորհիվ բարձր փոխազբունակության, այդ սորտի խաղողի օգատությունը թարմ վիճակում հնարավոր է Հայաստանի սահմաններից շատ հետու:

Պիտանի է նաև բարձրորակի, քաղցր գեսերակի գինի պատրաստելու համար: Վերամշակման դեպքում ելանքը կազմում է  $65^{\circ}/_{0}$ -ից ավելի, շաքարայնությունը գինու մեջ— $20,6^{\circ}/_{0}$ , ոպիր-

ոք—16: Ինսպուրի էտիկան զեղուստացիոն հանձնաժողովի կողմից այդ սորտի երիտասարդ գինին գնահատվել է 8,4 բալով:

Սորտի դարձացումը նախատեսվում է ուսուռութիկայի խաղաղործական հին շրջաններում և Արարատյան դաշտավայրի նոր յուրացվող սոսպելի դրա հոգերում:

Հաղիսի: Գինու խաղող է, համեմատաբար բարձր ցրտադիմացկունությամբ: Վեգետացիոյի տեսզությամբ դասվում է միջին ուշանաս սորտերի շարքին: Աճեցողաթյունը՝ միջակ:

Ելանյութ հանդիսացող սերմնարույսը մեր կողմից հայտնաբերվել է Հայկական ՍՍՌ Կոտայքի շրջանի Հաղիս լեռան Ճայռերից մեկի վրա: Տովոյ մակերեռութից 1850 մետր բարձր գանգող վայրում ենթագրում ենք, որ այդ սերմնարույսը առաջցել է տեղական կուլտուրական խաղողի սերմերից, ըստ իրեռութին, թռչունների կողմից բերված այդ ժայռի ճեղքվածք:

Վեգետատիվ բազմացման դեպքում պազարերում է տրնկման երրորդ տարում, բերքատու շվերը կազմում են 80,0%՝ ողկույցների քանակը մեկ բերքատու շվի վրա—1,16, բերքավության գործակիցը՝ -0,9, ողկույցի միջին քաշը՝ 278 դրամ: Վաղի միջին բերքը (30 թից) բերքատվության 4-րդ տարում՝ 9600 գ:

Մազիկը երկուեն է: Ողկույցը խիտ, կոնաձև, երբեմն թեավոր: Պառուղը սկ (15,4 × 15,0 մմ), քիչ երկարավուն: 100 պտույթի քաշը՝ 220 գ, պտղի մեջ՝ 3 (2-4) սերմ:

Շաքարի պարունակությունը պառուղների մեջ առ 25/19—26,0% է, թթվությունը՝ 7,2%:

Վեգետացիոյի շրջանը 142 օր է:

Պիտանի է բարձր որակի դեսերտի զինի պատրաստելու համար:

Կենարունական զեղուստացիոն հանձնաժողովի կողմից այս սորտի գինին գնահատվել է 9,16 բալ (տասը բալային չկալայով):

Սորտի զարգացումը նախատեսվում է ուսուռութիկայի խաղաղործական հին շրջաններում և նախալեռնային գտնում:

Սերմնարույս 777/4: Պատցված է Արագածի և Ապիտակ Արաքսինի սոլուերի արամախաչումից: Սեղանի միջանաս խաղող է, շատ զեղեցիկ, խոշոր ողկույցներով և պառուղներով:

Բերքատվության երկրորդ տարում սերմնարույսը ունեցել է 5300 գ բերք: Մազիկը երկուեն է: Ողկույցը խոշոր և կոնաձև:

Պառւղը՝  $28,4 \times 17,5$  մմ, երկարավուն, ուսուցիկ կողքերով, մուգդագագույն: 100 պառւղի քաշը — 580 գ: Պառւղի մեջ սերմերի քանակը — 2 (1—4): Շաքարի պարունակությունը առ 16/IX —  $21,0^{\circ}/_0$ , թթվությունը՝  $3,35^{\circ}/_0$ :

Վեգետացիոն շրջանի ակողությունը — 130 օր: Մատերի փայտացումը պառւղների լրիվ հասունացման ժամանակ —  $77,2^{\circ}/_0$ :

Սերմնաբույս 65/16: Ստացված է Մախալի և Սպիտակի Սպենի սորտերի տրամախաչումից: Մեղանի խաղող է: Հասանացմամբ միջինուշանա:

Կտրոններով բազմացնելու դեպքում բերքատվության է դալիս անկումից 3—4-ամարի հետո:

Դուերի պայմաններում մեկ թփի միջին բերքը պաղաքերման երկրորդ տարում կազմում է 6400 գրամ:

Ծաղիկը երկան է: Ողկույզը մեծ է, ճյուղավորված: Պառւղը  $18,2 \times 18,1$  մմ, կլոր, գեղնականաչ գույնի: 100 պառւղի քաշը 365 գ, պառւղի մեջ սերմերի քանակը՝ 2 (1—4): Հասունացմած պառւղների մեջ շաքարի պարունակությունը առ 16/IX —  $23,2^{\circ}/_0$ , թթվությունը՝  $3,97^{\circ}/_0$ :

Վեգետացիոն ժամանակաշրջանի տևողությունը — 135 օր: Պառւղների լրիվ հասունացման շրջանում վաղի փայտացումը կազմում է  $75,0^{\circ}/_0$ :

Սերմնաբույս 65/16: Ստացված է Սեյանեց Մալենքրա սորտի սերմերի ցանքից: Մեղանի վաղահաս խաղող է, միջակ աճեցողությամբ:

Ծաղիկը երկան է: Ողկույզը ոչ խիտ, գլանաձև: Պառւղը  $14,4 \times 13,5$  մմ, կլորավուն, սև գույնի: 100 պառւղի քաշը — 150 գ, սերմերի քանակը՝ մեկ պառւղի մեջ՝ 4 (3—4): Շաքարի պարունակությունը պառւղների մեջ առ 23/VII —  $22,5^{\circ}/_0$ , թթվությունը —  $8,32^{\circ}/_0$ . Մեկ վաղի բերքատվությունը պաղաքերման երկրորդ տարում — 6150 գ:

Վեգետացիոն ժամանակաշրջանի տևողությունը — 114 օր: Վեգետացիայի վերջում վաղի փայտացումը —  $86,3^{\circ}/_0$ :

Սերմնաբույս 65/18: Ստացված է Սեյանեց Մալենքրա սորտի սերմերի ցանքից: Մեղանի վաղահաս խաղող է, ուժեղ աճեցողությամբ: Բերքատվությունը —  $85,7$  տոկոս, մեկ բերքատվությունը — 1,4: Ողկույզի միջին քաշը — 200 գ: Բերքատվության երկրորդ տարում մեկ վաղի միջին բերքը — 7025 գ:

Ներքության մասին պատճենը կազմված է բարձր գույնի պահանջման վերաբերյալ:





Նկ. 7. Ականանեց Մալինգը սորտի № 65/16 սերմաբույր:

Ծաղիկը երկառու է: Ողկույզը ոչ խիստ, ունձեւ: Պառողը  
 $16,0 \times 13,5$  մմ մեծության, օվալաձև, կանաչ գեղնագույն:  
Վեգետացիոն ժամանակաշրջանի տևողությունը — 122 օր:  
Վեգետացիայի վերջում վազի փայտացումը — 87,1 տոկոս:



Նկ. 8. Ականանեց Մալինգը սորտի № 65/18 սերմաբույր:

Սերբնարույս 7/3: Գինու ուշահաս խաղող է: Ստացված է Ասկենատ սորտի սերմերի ցանքից: Նորագոյացում է, աերել ձևով նման է Ասկենատին, իսկ պտուղների ձևով և որակական հատկանիշներով — Ճիւարին: Աճեցողոթյունը՝ միջակ է:

Մազիկը երկան է: Աղկույզը թեամար, միջին խառնթյան: Աղկույզի միջին քաշը — 358 գ: Պառողը  $17,0 \times 15,0$  մմ, օվալաձև, զեղնաւելանաչ գույնի: 100 պտուղի քաշը — 190 գ: Պառուղի մեջ սերմերի քանակը — 2 (1—3): Շաքարի պարունակությունը պտուղների մեջ առ  $28/|X - 27,4^0/_{\text{o}}$ , թթվությունը  $4,5^0/_{\text{o}}$ , Բերքավության երկրորդ տարում մենք թփի միջին բերքը կազմել է 3260 գ: Վեցետացիոն շրջանի աեղողությունը՝  $148$  օր: Պտուղների լրիվ հասունացման շրջանում վազի փայտացման առավելանը —  $78,0^0/_{\text{o}}$ :

Պիտանի է սեղանի և գետերտային գինիներ պատրաստելու համար:

Սերբնարույս 73/3: Գինու միջահաս խաղող է: Ստացված է Ֆուրմինա սորտի սերմերի ցանքից: Մազիկը — երկան: Աղկույզը — խիտ, գլանաձև: Աղկույզի միջին քաշը — 120 գ: Պառողը  $13,6 \times 13,5$  մմ, կլոր, կանաչազեղնագույն: 100 պտուղի քաշը — 160 գ: Պտղի մեջ սերմերի քանակը — 2 (2—4):

Շաքարի պարունակությունը պտուղների մեջ առ  $8/|X - 27,5^0/_{\text{o}}$ , թթվությունը —  $9,60^0/_{\text{o}}$ , Պայրական սորտը աճեցողության նույն պայմաններում առ  $22/|X$  պտուղներում ունի —  $22,6^0/_{\text{o}}$  շաքար, թթվությունը —  $7,92^0/_{\text{o}}$ : Բերքավության առաջին տարում սերմնարույնն ունեցել է 2600 գ բերք, երկրորդ տարում — 4800 գ:

Վեցետացիոն ժամանակաշրջանի աեղողությունը — 132 օր: Պտուղների լրիվ հասունացման շրջանում վազի փայտացումը —  $83,0^0/_{\text{o}}$ :

Պիտանի է բարձր սպիրտայնությամբ և թթվությամբ սեղանի թունդ գինիներ պատրաստելու համար, առանձնակի դուրսկոն արոմատով և բռնկեաով:

Սերբնարույս 44/2: Ստացված է Թամիլվերի սորտի սերմերի ցանքից: Հիմնական հատկանիշներով և առանձնահատկություններով վերաբարդրել է կլանյութ հանդիսացող սորտը, առաջն երկան ծաղկություն: Աւանաս խաղող է, միջակ աճեցողությամբ: Պաղաքերման երկրորդ տարում սերմնարույնի բերքը կազմել է 4500 գ, երրորդ տարում — 8900 գ: Աղկույզի միջին քաշը — 230 գ: Աղկույզը կօնաձև է, խիտ: Պտուղը —  $14,7 \times 14,7$  մմ, կլոր,

սև գույնի: 100 պտուղի քաշը — 180 գ, սերմերի քանակը պտուղի մեջ — 2 (1—3):

Շաքարի պարունակությունը պտուղների մեջ առ 18/IX—20,5<sup>0</sup>/<sub>00</sub>: թթվությունը — 8,2<sup>0</sup>/<sub>00</sub>:

Աճեցողության միանման պայմաններում երանյութ հանդիսացող թափլվերի սորտի պտուղների մեջ շաքարի պարունակությունը առ 23/IX — կազմում է 22,4<sup>0</sup>/<sub>00</sub>, թթվությունը — 4,04<sup>0</sup>/<sub>00</sub>:

Վեգետացիոն շրջանի տեսդությունը՝ 146 օր: Պտուղների լրիվ հասունացման շրջանում վազի փայտացումը — 80,8<sup>0</sup>/<sub>00</sub>: Հայաստանի ցածրադիր պայմաններում տալիս է թունդ գունավորված սեղանի թեթև գինի, բարձր թթվությամբ և հաճելի թարմացնող համով:

Սերմնաբույս 10/31: Ստացված է Սև Այգենի (Եղան աչք) ֆունկցիոնալ իգական սորտի սերմերի ցանքից: Շատ հատկություններով և հատկանիշներով վերարտադրել է ելանյութ հանդիսացող սորտը, բայց երկսեռ ծաղիկներով: Խաղողը ունիվերսալ նշանակություն ունի, ուշահաս է, միջին աճեցողությամբ: Պտղաբերման երկրորդ տարում սերմնաբույսը ունիցել է 4100 գ րեք: Ողկույզը դլանաձեւ, խիտ, միջին քաշը — 204 գ: Պտուղը — 16,0 × 16,0 մմ, կլոր, սև գույնի: 100 պտուղի քաշը — 260 գ: Սերմերի քանակը պտուղի մեջ — 3 (2—5): Պտուղների մեջ շաքարի պարունակությունը առ 21/IX — 26,0<sup>0</sup>/<sub>00</sub>, թթվությունը — 8,0<sup>0</sup>/<sub>00</sub>:

Վեգետացիոն շրջանի տեսդությունը — 140 օր: Պտուղների լրիվ հասունացման շրջանում վազի փայտացումը — 76,0<sup>0</sup>/<sub>00</sub>:

Բերքը պիտանի է մուգ-կարմիր գույնի սեղանի գինի պատրաստելու համար:

Սերմնաբույս 80/1: Ստացված է Կողրենի սորտի սերմերի ցանքից: Գինու խաղող է, միջահաս, միջակ աճեցողությամբ:

Ծաղիկը երկսեռ է: Ողկույզը կոնաձեւ, խիտ (11,5 մմ երկարությամբ և 7,8 մմ լայնությամբ): Ողկույզի միջին քաշը 170 գ: Պտուղը 19,2 × 16,1 մմ, օվալաձեւ, սև գույնի: Պտղամիսը հյութալի է: Սերմերի քանակը պտուղի մեջ — 2 (1—4):


Շաքարի պարունակությունը պտուղների — մեջ առ 22/IX—23,1<sup>0</sup>/<sub>00</sub>, թթվությունը — 10,7<sup>0</sup>/<sub>00</sub>: Պտղաբերման երկրորդ տարում սերմնաբույսի բերքը կազմել է 2250 գ: Վեգետացիոն ժամանակաշրջանի տեսդությունը — 138 օր:

Պիտանի է սեղանի թեթև գինի պատրաստելու համար 11,8<sup>0</sup> սպիրտի պարունակությամբ և 9<sup>0</sup>/<sub>00</sub> թթվությամբ:

Սերմնաբույս 62/5: Ստացված է Լալվարի սորտի սերմերի ցանքից. Գինու խաղող է, միջին ուշահաս, միջակ աճեցողությամբ: Մաղիկը երկանու է: Ողկույզը կոնաձև, խիտ ( $15,4$  սմ երկարությամբ,  $7,7$  սմ լայնությամբ): Ողկույզի միջին քաշը —  $145$  գ: Պտուղը  $16,7 \times 13,4$  մմ, օվալաձև, դեղնա-կանաչ գույնի, կարմիր քծերով: Պտղամիսը հյութալի: Սերմերի քանակը պտուղի մեջ —  $3(2-5)$ : Շաքարի պարունակությունը պտուղների մեջ առ  $22/1\text{X}-24,0\%$ , թթվությունը —  $6,6\%$ :

Պտղարերման երկրորդ տարում սերմնաբույսի բերքը կազմվել է  $4700$  գ: Վեգետացիոն շրջանի տևողությունը —  $135$  օր:

Պիտանի է սեղանի գինի պատրաստելու համար:



Նկ. 9. Լալվարի սորտի № 62/5 սերմնաբույսը:

Սերմնաբույս 780/1: Ստացված է Բանանց և Ճիլար սորտերի տրամախաչումից: Գինու խաղող է, ուշահաս, ուժեղ աճեցողությամբ: Մաղիկը երկանու է, ողկույզը կոնաձև, խիտ, ողկույզի միջին քաշը —  $363$  գ: Պտուղը —  $20,0 \times 18,3$  մմ, օվալաձև, դեղնա-կանաչ գույնի, հյութալի: Սերմերի քանակը պտուղի մեջ —  $2(1-2)$ :

Շաքարի պարունակությունը առ  $23/1\text{X}-24,0\%$ , թթվությունը —  $5,7\%$ :

Սերմնաբույսի բերքը պտղարերման երկրորդ տարում կազ-


մել է 6800 դ. երբորդ տարում—8100 դ. Վեգետացիոն շրջանի տևողությունը—144 օր:

Պիտանի է սեղանի գինի պատրաստելու համար:

Սերմնաբույս 57/20: Ստացված է Հայկական ՍՍՌ Նորմականքի շրջանում քիչ տարածված Դալաչա սորտի սերմերի ցանքից: Գինու խաղող է, միջանաս, միջակ աճեցողությամբ: Ծաղիկը երկսեռ է: Ողկույզի միջին քաշը—210 դ: Պառուղը— $14,1 \times 8,9$  մմ, կլորավուն, սեղույնի, մսալի, սերմերի թիվը պառուղի մեջ— $2(1-4)$ : Շաքարի պարունակությունը պառուղների մեջ առ 13/1X—23,0%/<sub>00</sub>, թթվությունը—7,9%/<sub>00</sub>:

Սերմնաբույսի բերքը պազարերման երկրորդ տարում կազմում է 4250 դ:

Վեգետացիոն շրջանի տևողությունը—133 օր: Պիտանի է սեղանի գինի պատրաստելու համար:



Նկ. 10. Զբաղի սորտի սերմնաբույս № 81/11:

Սերմնաբույս 81/11: Ստացված է Զբաղի սորտի սերմերի ցանքից: Գինու խաղող է, միջին ուշանաս, միջակ աճեցողությամբ: Ծաղիկը երկսեռ է: Ողկույզը գլանակոնաձև, խիտ ( $17,4$  սմ երկարությամբ,  $7,5$  սմ լայնությամբ): Ողկույզի միջին քաշը  $319$  դ: Պառուղը— $17,0 \times 13,4$  մմ, օվալաձև, կանաչավերեղնադռյան, հյութալի, սերմերի թիվը պառուղի մեջ— $2(1-4)$ : Շաքարի պա-

բունակությունը պառզեների մեջ առ 23/IX—23,2<sup>0</sup>/₀, թթվությունը—5,18<sup>0</sup>/₀₀, Սերմնաբույսի բերքը պաղաքերման երկրորդ առողջ կազմել է 4200 գ, Վեգետացիոն շրջանի տեսզությունը—135 օր։ Գիտանի է սեղանի գինի պատրաստելու համար։

Սերմնաբույսի երկրորդ տարօքա պաղաքերման բերքից պատրաստված երիտասարդ գինին ունեցել է 14,3<sup>0</sup> սպիրտ և 5,6<sup>0</sup>/₀₀ թթվություն։

Սերմնաբույս 53/12: Ստացված է մանիչակադույն Մուսկատ սորտի սերմերի ցանքից։ Գինու ուշահաս խաղող է, ուժեղ աճեցողությամբ։

Ծաղիկը երկսեռ է։ Աղկույզը կոնաձև, խիտ (13,1 սմ երկարությամբ, 9,6 սմ լայնությամբ)։ Աղկույզի միջին քաշը—185 գ, Պտուղը—15,8×14,7 մմ, կլորավուն, կանաչավուն, դեղնագույն և հյութալի։ Սերմերի թիվը պառզեների մեջ—3 (1—4), Շաքարի քանակությունը պառզեների մեջ առ 9/IX—27,7<sup>0</sup>/₀, թթվությունը—12,8<sup>0</sup>/₀₀։

Սերմնաբույսի բերքը պաղաքերման երկրորդ տարօքա կազմել է 5450 գ, Վեգետացիոն շրջանի տեսզությունը—134 օր։ Գիտանի է գեղերտային գինիներ պատրաստելու համար։

Սերմնաբույս 75/19: Ստացված է Աև Մուսկատ սորտի սերմերի ցանքից։ Գինու ուշահաս խաղող է, մուսկատային ուժեղ արոմատով, փարթամ աճեցողությամբ։ Ծաղիկը երկսեռ է։ Աղկույզը կոնաձև, խիտ (16,0 սմ երկարությամբ, 8,6 սմ լայնությամբ)։ Աղկույզի միջին քաշը—140 գ, Պտուղը—15,3×13,7 մմ, կլորավուն, կանաչ-դեղնագույն, հյութալի, մուսկատային ուժեղ արոմատով։ Սերմերի թիվը պառզենեջ—3 (1—4), Շաքարի պարունակությունը պառզեների մեջ առ 19/IX—25,5<sup>0</sup>/₀, թթվությունը—5,8<sup>0</sup>/₀₀։

Սերմնաբույսի բերքը պաղաքերման երկրորդ տարօքա կազմել է 3500 գ, Վեգետացիոն ժամանակաշրջանը 136 օր է։ Գիտանի է գեղերտային գինի պատրաստելու համար։

Սերմնաբույս 930/2: Ստացված է Աև Այգենի և Սերսիալ զեմագերա սորտերի արամախաչումից։ Գինու միջանաս խաղող է, միջակա աճեցողությամբ։

Ծաղիկը երկսեռ է։ Աղկույզը կոնաձև, միջին խտության (14,5 սմ երկարությամբ, 13,0 սմ լայնությամբ)։ Աղկույզի միջին քաշը—100 գ, Պտուղը—15,6—15,2 մմ, կլոր, ուկ գույնի, հյութալի։ Պտզի մեջ սերմերի թիվը—2 (1—4), Շաքարի պարունակությունը պառզեների մեջ առ 19/IX—25,5<sup>0</sup>/₀, թթվությունը—5,8<sup>0</sup>/₀₀։

Նակությունը պառագների մեջ առ 15/IX—26,0%/<sub>00</sub>, թթվությունը — 6,6%/<sub>00</sub>:

Սերմնաբույսի բերքը պտղաբերման երկրորդ տարում — 2200 գ:

Վեգետացիոն ժամանակաշրջանը — 130 օր: Պիտանի է դեսերտային դինի պատրաստելու համար:

Սերմնաբույս 719/12: Ստացված է Արմենիա և Նազելի սորտերի տրամախաչումից: Սեղանի միջին ուշահաս խաղող է, ուժեղ աճեցողությամբ: Ծաղիկը երկասեռ է: Ողկույզը կոնաձև, միջին խտության (17,3 սմ երկարությամբ, 12,3 սմ լայնությամբ): Ողկույզի միջին քաշը 420 գ: Պառուղը — 19,7 × 14,8 մմ, ձվածի է, սաթաղեղինագույն, մսալի, չզարդացած սերմերով:

Շաքարի պարունակությունը պառագների մեջ առ 6/IX—21,7%/<sub>00</sub>, թթվությունը — 5,8%/<sub>00</sub>:

Սերմնաբույսի բերքը պտղաբերման երկրորդ տարում — 6680 գ: Վեգետացիոն ժամանակաշրջանը — 135 օր: Պիտանի է թարժվիճակում օգտագործելու համար, որպես բարձրորակ սեղանի խաղող չզարդացած սերմերով:

Սերմնաբույս 720/9: Ստացված է Արմենիա և Վարդագույներեանի սորտերի տրամախաչումից: Սեղանի խաղող է, միջին ուշահաս, միջակ աճեցողությամբ:

Ծաղիկը երկասեռ: Ողկույզը կոնաձև, միջին խտության (10,7 սմ երկարությամբ, 10,4 սմ լայնությամբ): Ողկույզի միջին քաշը — 320 գ: Պառուղը 26,5 × 17,0 մմ, ուռուցիկ կողերով, մուգվարդագույն, պտղամիսը հյութալի, համը շատ դուրեկան: Պատղի մեջ սերմերի թիվը — 1 (1—2): Շաքարի պարունակությունը պառագների մեջ առ 1/IX—20,8%/<sub>00</sub>, թթվությունը — 3,6%/<sub>00</sub>:

Սերմնաբույսի բերքը պտղաբերման երկրորդ տարում — 4300 գ: Վեգետացիոն ժամանակաշրջանը — 132 օր:

Սերմնաբույս 720/18: Ստացված է Արմենիա և Վարդագույներեանի սորտերի տրամախաչումից: Սեղանի ուշահաս խաղող է, ուժեղ աճեցողությամբ:

Ծաղիկը երկասեռ է: Ողկույզը գլանակոնաձև, միջին խտության (16,9 սմ երկարությամբ, 9,4 սմ լայնությամբ): Ողկույզի միջին քաշը — 280 գ: Պառուղը 22/IX — 15,7 մմ, օվալաձև, մուգվարդագույն: Պտղամիսը խրճիրածան, համը դուրեկան և թարմացնող: Սերմերի թիվը պտղի մեջ — 2 (1—3): Շաքարի



Նկ. 11. Սերմաբուլ 719/12 — Արժենիա $\times$ Նազելի:

պարունակությունը՝ պտուղների՝ մեջ առ 11/IX—24,2, թթվությունը՝ 6,24%/<sub>00</sub>,

Սերմաբուլսի բերքը՝ պտղաբերման երրորդ տարում՝ 5600 գ, վեղետացիոն՝ ժամանակաշրջանը՝ 140 օր:

\* \* \*

Նշված գործնական արդյունքները՝ մեր կողմից ստացվել են համեմատաբար քիչ թվով պտղաբերող սերմաբուլսերից (ժամավառպես 2200 սերմաբուլսերից):

Սերմաբուլսերի հիմնական մասը զնուա բերքի չի եկել սակայն, ելնելով նրանց ընդհանուր վարքագնից և զարդացման բնույթից վստահ կարող ենք տսել, որ ստեղծված սեւեկայուն

h<sub>q</sub>. 12. Uba p<sub>2</sub> u<sub>1</sub> p<sub>2</sub> u<sub>1</sub> 720/18 - U<sub>p</sub> d<sub>b</sub> u<sub>p</sub> u × q<sub>u</sub> u p<sub>q</sub> u<sub>1</sub> p<sub>2</sub> u b<sub>p</sub> d<sub>u</sub> u<sub>p</sub>;



Փոնդը ընդգրկում է իր մեջ մեծ համավորություններ՝ լուծելու հետպայում մի շարք գործնական խնդիրներ, որոնք գրիֆած խաղողի վազի սելեկցիայի առաջ մեր ուսուցութիւնայում:

С. А. Погосян, С. С. Хачатрян

## Новые сорта и ценные сеянцы винограда селекции научно-исследовательского Института виноградарства и виноделия Армянской ССР

### Резюме

Начиная с 1939 года нами изучаются более 14 000 сеянцев корнесобственного винограда, выращенных из семян местных стародавних и некоторых привозных сортов и их гибридов в различных комбинациях скрещивания. Целью этих исследований являлось изучение характера изменчивости семенных растений винограда в пределах потомства и в индивидуальном развитии, их податливость к воспитанию под влиянием ментора и других условий жизни, жизненность сеянцев и их вегетативного потомства, выведение новых высокоурожайных качественных сортов столового и винного винограда.

В процессе изучения, наряду с разрешением теоретических вопросов, относящихся к природе семенного потомства корнесобственного винограда, вывели семь новых сортов и ряд ценных сеянцев столового и винного винограда, описание которых приводится в данной работе.

*Раздані* — получен путем высева семян стародавнего местного сорта Кармир Кахани. Поздний столовый сорт с крупными гроздями и ягодами фиолетовой окраски, приятным вкусом и высокой урожайностью.

*Армения* — получен путем скрещивания Ицаптук × Сев Сатени и воспитания молодого сеянца под влиянием ментора из сорта Еревани Желтый. Среднеспелый столовый виноград с красивым внешним видом, черными крупными удлиненными ягодами с очень приятным вкусом. Кроме потребле-

ния в свежем виде пригоден и для изготовления крупногодного высококачественного изюма.

*Арагаци* — получен путем скрещивания Ицаптук × Еревани Розовый и воспитания молодого сеянца под влиянием ментора из сорта Аарати. Столовый виноград позднего периода созревания, с весьма красивым внешним видом, крупными гроздями и ягодами розовой окраски, приятным вкусом, высокой урожайностью и транспортабельностью. Потребляется в свежем виде, для зимнего хранения и изготовления высококачественного маринада.

*Вардени* — получен путем скрещивания Ицаптук × Еревани Розовый и воспитания молодого сеянца под влиянием ментора из сорта Еревани Розовый. Поздний столовый виноград с розовыми ягодами, нежным вкусом и красивым внешним видом.

*Токун* — получен путем высева семян сорта Спитак Араксии. Столовый виноград среднего периода созревания. Отличается высокой урожайностью и особо высокой транспортабельностью. При переработке дает высокого качества сладкое столовое вино.

*Адиси* — получен путем отбора в природных условиях — на одной из скал горы Адис Котайкского района Армянской ССР. Черноягодный винный сорт с высокой урожайностью и сравнительно повышенной морозостойкостью. Дает высококачественное десертное вино.

Эти сорта в условиях юга Армении на кирах с гектара дают от 230—300 центнеров высококачественного винограда. Рекомендуются для внедрения в старых районах виноградарства республики и на вновь освояемых землях сухостепной зоны — кирах.

В отношении описанных в работе ценных сеянцев изучение продолжается, с целью выведения из них новых сортов винограда различного хозяйственного значения и различных сроков созревания.